## ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքը և վարդապետութիւնը.—Տաճատ քահանայ Մարաղեան, Բագու 1898. գինը 1 ր.

— Ցուցատախտի անցեալից (պատմ. տեսութիւն). — Ե. Թոփչեան. Ս. Պետերբուրգ 1898. գինը 20 կ.

—L'Univers et sa formation. — N. Dagavarian, Constantinople 1898.

Տիկին Տ. Կոստանեանցի թարգմանութիւնները.

Ա. Կեանքի դպրոց.—Հոֆմանի. Թիֆլիս 1897. գինը 10 կ.

Բ. Ջինուոր Յակոբ. գինը 7 կ.

Գ. Աստղէ գրամ. Հարուստը և աղքատը. Սպիտակ օձ.—Գրիմմ. գինը 7 կ.

Դ. Օնիկը և Մարգարիտը. Նապաստակը և Ոզնին. Գայլն ու մարգը. գինը 10 կ.

Ե. Մատանի. Թռչնիկ. Չար մոքով չէ. 1898. գինը 7 կ.

Զ. Ցունաց ուսուցիչ Սոկրատէսը. գինը 20 կ.

Վերջին գրքոյկը Տիկնոջ 21-դ թարգմանութիւնն է, Բոլորը միասին կազմում են մի փոքրիկ մատենադարան, ըստ մեծի մասին փոքրիկ ընթերցողների համար, որոնց թիւը, ցանկալի է, շատ լինէր. Այդ գրքոյկներն, իրենց ընտիր բովանդակութեամբ և ընտիր լեզուով՝ ամենագեղեցիկ ընթերցանութեան նիւթ են մեր մանուկների համար, և իրենց գներով՝ ամենքին մատչելի.

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ. ՄՈՍԿՈՒԱ.

Պետ. Խորհրդ. Դանիէլ Գաբրիէլեան Քանանեանի մրցանակի Բարձրագոյն կանոնադրութեան 7-րորդ յօդուածի հիման Լազարեան Ճեմարանի Մասնագիտական Դասարանների Խորհուրդը իւր սոյն Փետրուարի 7-ին կայացած նիստում վճռեց յայտարարել ի գիտութիւն մասնագէտների առաջիկայ երկու նիւթերը՝ երկու մրցանակի համար՝ իւրաքանչիւրը 600 րուբլի.

Ա.—«Հաւաքումն և դասաւորութիւն Արաբացի մատենագիրների հաղորդած տեղեկութիւնների Հայաստանի և Հայերի մասին՝ մինչև ԺԴ. դարու վերջը՝ ներկայացրած նիւթերի քննական բացատրութեամբ հանդերձ:»

Բ.—«Նիւթեր ժամանակակից Հայերի սովորութեան, իրաւունքի կամ ազգային իրաւաբանական սովորոյթների»:

Շարադրութիւնները կարող են ներկայացուել Հայերէն կամ Ռուսերէն, Փրանսերէն կամ Գերմաներէն:

Լաւագոյն շարադրութիւնը յիշեալ իւրաքանչիւր նիւթերից մէկի մասին կը պարգևատրուի Խորհրդի կողմից վեց հարիւր (600) րուբլի մրցանակով:

Եթէ առաջին կամ երկրորդ նիւթի մասին ներկայացրած շարադրութիւններից երկուսը հաւասար արժանաւորութիւն ունենան, Խորհուրդը կարող է բաժանել մրցանակը երկուսի հեղինակների մէջ:

Շարադրութիւնները պէտք է ներկայացուեն ոչ ուշ քան 7-ն Օգոստոսի 1900թ.:

Վերատեսուչ Ճեմարանի Վս. Միլլեր.

Քարտուղար Խորհրդարանի Գ. Խալաթեանց.

15 Փետրուարի 1898 թ.

Մոսկուա.